ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

№ 18 (1155)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հարգելի՛ դասախոսներ, գիտաշխատողներ, ուսանողներ և Մանկավարժական համալսարանի մեծ ու պատվավոր ընտանիքի անդամներ

Ի սրտե շնորհավորում եմ գալիք Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Այս խորհրդանշական օրերին, երբ ամփոփվում են անցնող տարվա ձեռքբերումները, գնահատվում է կատարված աշխատանքը և ուրվագծվում են ապագայի նոր նպատակներն ու ռազմավարական առաջնահերթությունները, առանձնահատուկ կարևորություն ունի ձեր՝ բարձր պատասխանատվությամբ, մասնագիտական նվիրումով և կարգապահությամբ իրականացված գործունեությունը: Ձեր հետևողական աշխատանքը նշանակալի ներդրում է ունեցել կրթության և գիտության զարգացման, ինչպես նաև ազգային արժեքների պահպանման ու շարունակական հարստացման գործում:

Համալսարանի աշխատակազմի և ուսանողական համայնքի համատեղ, նպատակասլաց ու հետևողական ջանքերի շնորհիվ ապահովվել է հաստատության՝ որպես մանկավարժական մտքի զարգացման, գիտական հետազոտությունների իրականացման և կրթական նորարարությունների ներդրման կարևոր կենտրոնի կայուն առաջընթացը, արձանագրվել են նշանակալի ձեռքբերումներ:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում համալսարանի յուրաքանչյուր աշխատակցի՝ իր բարեխիղճ ծառայության համար, դասախոսներին՝ գիտելիքի և արժեքների փոխանցման պատասխանատու առաքելության համար, ուսուցիչներին՝ սերունդների կրթման ու դաստիարակության մեջ ունեցած անփոխարինելի դերի համար, իսկ ուսանողներին՝ ուսումնառության նկատմամբ ցուցաբերած պատասխանատու վերաբերմունքի և համալսարանական կյանքը կենսունակ պահելու համար:

Թող գալիք տարին լինի խաղաղության, ստեղծագործ ներշնչանքի, գիտական և մանկավարժական նոր ձեռքբերումների տարի: Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, մասնագիտական կայունություն և անսպառ եռանդ՝ կրթելու ու դաստիարակելու վաղվա պատասխանատու, գիտակից և հայրենասեր սերնդին:

Թող Նոր տարվա լուսավոր խորհուրդը մեր համալսարան բերի համախմբվածություն, նոր նախաձեռնություններ և շարունակական առաջընթաց՝ ի բարօրություն պետության և հասարակության:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Լիլիթ Մկրտչյան
ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նիստը, որը վարում էր ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը:

Բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը Խորհրդի անդամներին ներկայացրեց 2025 թվականին կատարված աշխատանքների հաշվետվությունը, ինչպես նաև 2026–ի բյուջեով նախատեսվող ֆինանսական ծախսերը:

Լիլիթ Մկրտչյանն անդրադարձավ վարկանիշային սանդղակներում համալսարանի դիրքերի բարելավմանը, 2020-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրերի կատարմանը, դիմորդների թվաքանակի աճին, մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխմանը, ուսումնական պլանների արդիականացմանը, համալսարանի միջազգային գործընթացներին, ուսանողական նախաձեռնություններին ու կամավորական գործունեությանը, հանրային իրազեկման աշխատանքներին, ինչպես նաև բուհի ենթակառուցվածքներին ու տեխնիկական հագեցվածությանը:

Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց նախատեսված մի շարք կառուցվածքային փոփոխություններ, որոնք բխում են համալսարանի գործունեության արդյունավետությունից, համալսարանական դպրոցների գործունեությունը, անդրադարձավ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերի բարձրացման հնարավորություններին, ուսուցիչների ու մանկավարժների վերապատրաստումներին, միջազգային փոխանակման ծրագրերին, ուսումնական ծավալների բեռնաթափմանն ու գիտական բաղադրիչը դասախոսների աշխատավարձերում ներառելուն և այլ հարցերի:

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց բուհի գիտական գործընթացները՝ թվերի և իրողությունների լեզվով ներկայացնելով գիտահետազոտական աշխատանքները՝ գիտաժողովներից մինչև հրապարակումներ, ուղեցույցներ ու ձեռնարկներ:

Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց բուհի ֆինանսական հոսքերը, անդրադարձավ նաև 2026-ի բյուջեի նախահաշվին:

Հաշվետվության շուրջ ծավալվեց քննարկում. խորհրդի անդամները զեկուցողին հարցեր ուղղեցին, որոնք վերաբերում էին կրթական գործընթացների բարելավմանը, մասնագիտական կրթական ծրագրերում փոփոխություններին, պրակտիկաների անցկացման ձևաչափերին, գիտաչափական շտեմարաններում դասախոսների վարկանիշավորմանը, ԲՏՃՄ մասնագիտություններով ընդունված ուսանողների հետագծի վերլուծությանն ու վիճակագրությանը, երկակի մասնագիտությունների ձեռքբերման արդյունավետությանը, բազային դպրոցներին և մսուր մանկապարտեզի նախաձեռնմանը, գիտահետազոտական գործունեություն իրականացնելու նպատակով ֆակուլտետների ինստիտուցիոնալ համագործակցության անհրաժեշտությանը, համալսարանի ֆինանսական հնարավորություններին ու բյուջեի նախահաշվին, բուհի անվտանգությանը և այլ ուղղությունների:

ՀՀ ԿԳՄՍ նախարար, Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանն ասաց, որ փոփոխությունները պետք է բխեն հանրակրթության չափորոշչի տրամաբանությունից:

Նախարարը կարևորեց կրթական ծրագրերի համադրելիությունը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքին, խոսեց «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների ռազմավարության մասին:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը ներկայացրեց վերանայված մանկավարժական պրակտիկաների ձևաչափը, շեշտադրեց հետազոտական-նախագծային աշխատանքների դերը:

Խորհուրդը համալսարանի 2025 թվականի հաշվետվությունը գնահատեց դրական, ապա հաստատեց 2026 թվականի բյուջեի նախահաշիվը, եկող տարվա հաստիքացուցակն ու կառուցվածքային փոփոխություններ

2025 թվականի ֆինանսական գործունեության հաշվետվությունը կհաստատվի հաջորդ տարվա հունվարին:

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը մասնակցեց համալսարանի ֆակուլտետների խորհուրդների ընդլայնված նիստերին, ծանոթացավ պրոֆեսորադասախոսական կազմին և լսեց տարվա հաշվետվությունները:

Լիլիթ Մկրտչյանը բարձր գնահատեց ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական ներուժը և ընդգծեց նրանց դերն ու գործունեությունը, կարևորեց հաշվետվողականությունը՝ հասկանալու համար՝ որտեղ ենք հաջողել, ինչ ձեռքբերումներ ունենք և ինչպես պետք է առաջ ընթանալ:

Բոլոր ֆակուլտետներում նա խոսեց երեք

կարևոր սկզբունքի մասին, որոնք պետք է յուրաքանչյուրը դնի իր աշխատանքային գործունեության հիմքում՝ կարգապահություն, թափանցիկություն, պատասխանատվություն:

Անդրադառնալով ուսուցչի կերպարի ու նկարագրի արժևորմանը՝ Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց, որ դա պայմանավորված է նաև պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությամբ: Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց առկա խնդիրները քարտեզավորելու, կրթական միջավայրի ստեղծման, ուսանողների պրակտիկայի դերի բարձրացման, որակի ապահովման խնդիրների, համալսարան-դպրոց կապի սերտացման, վերապատրաստումների, կարիքահեն կրթության, ՀՊՉ-ի հիմքում դրված չորս հիմնասյուները բուհի կրթական ծրագրերին համապատասխանելու, բուհի միջազգայնացման ընդլայման, կրթության հետազոտական բաղադրիչի, թվային գործիքների կիրառման և շատ այլ հարցերի մասին:

Հաշվետու տարում ակտիվ գիտական գործունեություն ծավալած դասախոսները պարգևատրվեցին շնորհակալագրերով:

Դեկանները տարեվերջյան հաշվետվությունների մեջ հանգամանորեն անդրադարձան ֆակուլտետների առաքելությանն ու նպատակներին, կառավարմանն ու վարչարարությանը, մասնագիտական կրթական ծրագրերին՝ մեթոդներից մինչև մոտեցումների քաղաքականություն, արտաքին ու ներքին կապերին, ուժեղ ու թույլ կողմերին, զարգացման տեսլականին :

Դասախոսների բարձրացրած հարցերը վերաբերում էին աշխատավարձերին, պրակտիկային, գիտական աշխատանքը դրույքաչափի մեջ մտցնելուն, համալսարան-դպրոց կապին, դասախոսների համար օտար լեզուների ուսուցման հնարավորություն ստեղծելուն:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կրթական բազմազան միջավայրը, ինչպես նաև «Արվեստ-արհեստ» մասնագիտությունը՝ ընդգծելով Մանկավարժական համալսարանի դերը նոր գաղափարների արարման և խնդիրների լուծման գործում՝ շեշտը դնելով համագործակցային աշխատանքի վրա:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը առաջարկություններ արեց,

որոնք վերաբերում էին միջազգային հարթակներում դրամաշնորհային ծրագրերի շարունակականությանը, առարկայական վերապատրումներին, մասնավորապես «Արվեստ» առարկայից, արվեստի մասնագիտությունների համար նյութատեխնիկական բազայի վերազինման կարևորությանը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը մարտահրավերների համատեքստում խոսեց ուսուցիչների մեծ ծանրաբեռնվածության ու ցածր աշխատավարձերի մասին՝ նաև դրանով պայմանավորելով տարրական օղակի դիմորդների թվի նվազումը, ինչպես նաև առաջարկություններով հանդես եկավ, այդ թվում՝ ավագ դպրոցում կրեդիտային համակարգը կիրառելու հնարավորության մասին:

Կարևորելով դասախոսների դերը ուսուցչի արժևորման գործում, ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը դիմորդների թվի նվազման դիտանկյունից առաջարկեց մշակել քաղաքականություն՝ ընդհուպ ներառելով ուսուցիչների և աշակերտների համաժողովների կազմակերպումը՝ որպես երկխոսության հարթակ:

Խորհրդի ընդլայնված նիստում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանը խոսեց լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման անհրաժեշտության, արդյունավետ ուսուցմանը միտված վերապատրաստումների շարունակականության մասին:

Կուլտուրայի ֆակուլտետի գործունեության մասին հաշվետվության մեջ դեկան Գևորգ Թադևոսյանն անդրադարձավ մշակութային ֆակուլտետի մասնագիտությունների առանձնահատկություններին, կարևորեց մշակութային մասնագիտությունների նյութատեխնիկական բազայի ապահովման անհրաժեշտությունը, նաև որոնցով են պայմանավորված մասնագիտական զարգացումներն ու առաջընթացը:

Ի դեպ, հանրապետությունում միակ բուհն է, որ պատրաստում է գրադարանավար, թանգարանագետ, մատենագետ, պարուսույց-մանկավարժ և գեղարվեստական լուսանկարիչ: Այս առանձնահատկություններով ֆակուլտետը զարգացման ուղղություններ է կանխանշում, նաև ի մի բերում հետաքրքիր ու ինքնատիպ գործունեությունը:

Ռեկտորի պաշտոնակատարն ընդծելով վերոհիշյալ մասնագիտությունների առանձնահատկությունները՝ պրոֆեսորադասախոսական կազմին հորդորեց համախմբվել կրթության որակի հարցերի շուրջ և դառնալ կրթական բոլոր գործընթացների մասնակիցը:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոսները հանդես եկան մի շարք առաջարկություններով, որոնք կբարձրացնեն ուսուցման արդյունավետությունը. դրանք վերաբերում էին դաշտային պրակտիկաների վերականգնմանը, լաբորատորիաները սարքավորումներով հագեցնելուն, տեխնիկական տարբեր խնդիրների:

Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ այսօրինակ հանդիպումները կարևոր են, առաջիկայում ևս դրանք տարբեր ձևաչափերով շարունակական կլինեն, նպատակը իրականությունը տեսնելն է և ռեսուրսների գնահատումը: Բոլոր որոշումները փաստերի վրա հենված կլինեն: Ռեկտորի պաշտոնակատարն անդրադարձավ մեկ կարևոր հարցի՝ արդյո՞ք ԲՏՀՄ մասնագիտություններ ստացած շրջանավարտները դպրոց են մտնում:

Օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստում Լիլիթ Մկրտչյանը շեշտադրեց մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին հետազոտա-

կան բաղադրիչի, պրակտիկայի ավելացմանը, ֆրանսերենի՝ առաջին օտար լեզու դարձնելու հնարավորություններին, միջազգային համագործակցության ընդլայնմանն ու օտարերկրյա դիմորդների ներգրավմանը:

Պատմության և հասարակագիտության պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմանը բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց, որ յուրաքանչյուր որոշում պետք է բխի համալսարանի, դասախոսի և ուսանողի շահերից, միաժամանակ խոսեց մասնագիտությունը ներկայացնելու և արժևորելու անհրաժեշտության մասին:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում գործնական առաջարկներ եղան լաբորատորիաների վերաբացման, մասնագիտությունների և մասնագիտացումների տարանջատման և այլ հարցերի շուրջ:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերը դարձել են ավելի մրցունակ, աշխատանքներ են տարվում սահուն սերնդափոխության և ուսուցման նորարարական մեթոդների ընդլայնման ուղղությամբ:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը վստահեցրեց՝ հնարավոր ժամկետներում որոշ խնդիրների լուծումներ կգտնվեն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 19-ին կայացավ Գիտական խորհրդի տարեվերջյան նիստը, որտեղ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հանդես եկավ 2025 թվականին կատարված աշխատանքների և 2026 թվականին նախատեսվող բյուջեի մասին հաշվետվությամբ՝ անդրադարձ անելով բուհի գործունեության տարբեր ուղղություններին:

Նա նշեց, որ համալսարանն իր դիրքերը բարելավել է համալսարանների Webometrics ranking of world universities և EduRank վարկանիշային սանդղակներում, իսկ 2020-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը և նրանից բխող 2022-2025 թվականների գործողությունների պլանը կատարվել է 80 տոկոսով:

Հաշվետվության մեջ ռեկտորի պաշտոնակատարն անդրադարձավ ուսանողական համակազմին՝ մասնավորապես ներկայացնելով դիմորդների թվաքանակի աճը վերջին տարիների համեմատությամբ, կրթական գործընթացներին՝ բակալավրիական և մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման ցուցանիշներին, ուսումնական պլանների արդիականացմանը, գիտահետազոտական գործունեության մեջ նկատելի առաջընթացին:

Լիլիթ Մկրտչյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց տարվա ընթացքում բուհի միջազգային գործունեությունը, ուսանողական խորհրդի միջոցառումները, հանրային իրազեկման աշխատանքները, ենթակառուցվածքներն ու տեխնիկական հագեցվածությունը:

Ռեկտորի պաշտոնակատարը ներկայացրեց բուհի ֆինանսական հոսքերը՝ ելքերն ու մուտքերը, անդրադարձավ նաև 2026-ի բյուջեի նախահաշվին:

Բուհի գործունեության արդյունավետությամբ ու կրթության որակի բարձրացմամբ պայմանավորված՝ կատարվել են մի շարք կառուցվածքային փոփոխություններ, նաև ֆինանսական հնարավորությունների վերլուծության արդյունքում առաջիկայում կբարձրացվեն դասախոսների աշխատավարձերը:

Օրակարգի մյուս հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Կամո Վարդանյանը, որը ներկայացրեց ԿԳՄՄՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային և նպատակային ծրագրերի մասին հաշվետվություն, համալսարանում գործող լաբորատորիաների գործունեությունը:

Կամո Վարդանյանի ներկայացմամբ խորհուրդը հաստատեց ՀՊՄՀ գիտական աշխատողների ատեստավորման նոր կանոնակարգը:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը ներկայացրեց համալսարանի զարգացման 2022-2025 թթ. Ռազմավարական ծրագրի գործողությունների կատարողական հաշվետվությունը: Նա նշեց, որ համալսարանում ստեղծվել է 2026-2030 թթ. ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային հանձնաժողով, բացթողումները որոշակի շտկումներով կներառվեն 2026-2030 թթ.ռազմավարական ծրագրում:

Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց ամսվա հոբելյարներին, հանձնեց դոցենտի վկայականներ:

Գիտական խորհրդի նիստի ավարտին նա շնորհավորեց ներկաներին գալիք տոների առթիվ՝ մաղթելով խաղաղ, բարեկեցիկ, նոր գաղափարներով ու արարումներով տարի:

ՀՈԲԵԼՅԱՆ

ՓԱՌԱՎՈՐ ԷՋԵՐՈՎ ԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժ-արվեստագետների համար տարին հոբելյանական է. ֆակուլտետի 60-ամյակը նշում են բազմաթիվ ձեռքբերումներով ու համալսարանի պատմության մեջ նոր էջեր գրելով:

Բազմաթիվ սերունդներ կրթած ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին շնորհավորանքի խոսք է հղում ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դերակատարությունը հասարակությանը կրթելու, արժեքներ թելադրելու և ստեղծելու գործում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Հրանտ Թադևոսյանը ֆակուլտետի առաջին շրջանավարտներից է. հոբելյանը արժևորելու հնարավորություն է և խորհրդանշվում է բուհի ռեկտորի պաշտոնակատարի կողմից նրան շնորհված «Մանկավարժական համալսարան» մեդալով:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն անդրադարձ է անում ֆակուլտետի պատմությանը, որի էջերը փառավորվում են արվեստաբանության, կերպարվեստի, երաժշտության, դեկորատիվ-կիրառական արվեստի, հագուստի մոդելավորման ասպարեզի ճանաչված մասնագետների բեղուն աշխատանքով ու շարունակական գործունեությամբ:

Շնորհավորանքի խոսքեր են ասում ՀՀ նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը, Կերպարվեստի ամբիոնը նախկինում ղեկավարած ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանը:

Տոնը գեղեցկացնում են ամբիոնների երաժշտական կատարումներն ու ցուցադրությունները: Ու շարունակվում է ֆակուլտետի պատմությունը, որի առաջին էջերը գրվել է Հովհաննես Զարդարյանի, Ղուկաս Չուբարյանի, Զաքար Խաչատրյանի և շատ այլ արվեստագետ-մանկավարժների ձեռամբ:

Կրթական ավանդույթները շարունակում են նոր սերնդի երիտասարդները, որոնցից շատերը միգուցե ապագայում հայտնի անուններ դառնան՝ նորովի շարադրելով ֆակուլտետի ու բուհի պատմության ընթացքը:

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Հայտնի են ՀՀ բուհերի 2025 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողները. 7 ոլորտում անցկացված մրցույթին մասնակցած բարձր առաջադիմությամբ 37 ուսանող արժանացել է անվանական կրթաթոշակի:

Մրցույթի հաղթողների շարքում նաև Մանկավարժական համալսարանի ուսանողներն են. Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրանտ Ֆելիքս Բախչինյանը հումանիտար մասնագիտությունների ոլորտում զբաղեցրել է 1-ին տեղը, բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Գալստյանը՝ 3-րդ տեղը:

Հայագիտության ոլորտում 2-րդ տեղին արժանացել է Բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Պապիկյանը:

Մրցույթի արդյունքներով՝ 1-ին տեղը զբաղեցրած 14 ուսանողի կշնորհվի 393 500-ական ՀՀ դրամ դրամ, 2-րդ տեղը զբաղեցրած 14 ուսանող կստանա 313 500-ական դրամ, իսկ 3-րդ հորիզոնականը զբաղեցրած 9 ուսանող՝ 233 500 ՀՀ դրամ կրթաթոշակ:

Շնորհավորում ենք Խաչատուր Աբովյանի անունը կրող հայկական պետական մանկավարժական համալսարանի անունը բարձր պահող մեր ուսանողներին և մաղթում ենք նոր ձեռքբերումներով ու հետաքրքիր մտահղացումներով լի տարի:

«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ դեկտեմբերի 9-ին անցկացվեց գիտաժողով՝ «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի հիմնախնդիրներ» խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին երկու տասնյակից ավելի դասախոսներ, ուսանողներ, ուսուցիչներ Երևանից ու մարզերից:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց նման քննարկումները և համատեղ լուծումներ գտնելու հնարավորությունը. «Մանկավարժական համալսարանը պետք է լինի այն միջավայրը, որի շուրջ պետք է համախմբվեն ուսուցիչները, դասախոսները, աշակերտները, առհասարակ կրթության ոլորտի մարդիկ,-ասաց նա՝ անդրադարձ անելով կրթության հարցադրումներին ու մատուցմանը:- Կրթությունը պետք է լինի նորարար, փոփոխվող, որն իր ուսերին պետք է վերցնի ժամանակակից աշխարհի փոփոխությունները»:

Լիլիթ Մկրտչյանը հիշեցրեց կրթությանը վերաբերող երկու հիմական տեսությունների մասին՝ ընդգծելով, որ ավանդականը պետք է նորի հետ համադրել, և որ յուրաքանչյուր նորի հիմքում ավանդականն է դրված՝ ձևերն ու մոտեցումներն են փոխվել: Պետք է քարտեզագրել սովորողների կարիքները և կրթությունը դարձնել համապատասխան գործիք՝ իրենց դիրքավորելու և համապատասխան ապագա ստեղծելու ուղղությամբ: Իսկ կրթությունը դա կարող է անել բացառապես մեթոդաբանության շնորհիվ:

Ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը բացման խոսքում ներկայացրեց. «Դասավանդման մեթոդիկան հարափոփոխ ընթացքի մեջ է, անընդհատ փոխում է դեմքն ու դիմագիծը և ուսանողներին, հանրությանը ներկայանում նոր հարցադրումներով: Այսօր կրթության պատասխանատուներն ամբողջ աշխարհում փորձում են նոր դասատիպեր ու մեթոդներ առաջարկել մանկավարժությանը և առհասարակ մատաղ

սերնդին»:

Աշոտ Գալստյանի տեսանկյունից այսօր դասդասարանային համակարգն ինչ-որ առումով ապառել է իրեն. հայոց լեզվի և գրականության ժամանակակից դասը պետք է լինի նորովի, նոր հարթակում և պետք է առաջադրի նորանոր խնդիրներ: Բանախոսն արդի հիմնախնդիրների համատեքստում կարևորեց վերոհիշյալ խնդիրների դիտարկումն ու նոր լուծումների առաջարկումը:

Հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Համբանձումյանը պլենար նիստում խոսեց բուհական համակարգում գրավոր խոսքի ուսուցման, իր կարծիքով՝ կառուցման մեթոդիկայի մասին:Նրա տեսանկյունից՝ մանկավարժական կրթության կարևորությունն այսօր ավելի է մեծանում, այդ համատեքստում նա անդրադարձավ գրի զարգացման ընթացքին՝ որպես մշակութային արժեքի, ապա դիտարկումներ արեց ավարտական աշխատանքի ու մագիստրոսական թեզերի կառուցման, շարադրանքի ու հարցադրումների մասին:

Մանկավարժական գիտությունների թեկնածու Գայանե Մկրտչյանը հանգամանորեն ներկայացրեց էսսեի ուսուցման քայլաշարը միջին դպրոցում՝ անդրադառնալով առանձնահատկություններին, կառուցվածքին, էսսեին դիմելու նպատակին՝ պնդելով, որ այն այսօր գրավոր միակ ձևն է, որից շահում է և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյանի զեկուցումը բավականին հետաքրքիր էր. նա ներկայացրեց ածականի իմաստակառուցվածքային տեսակների տարբերակման մի քանի սկզբունքներ՝ անվանի հայ քերականների որոշ դիտարկումներին հակադրելով իր դիտարկումները և ներկայացնելով ուսուցիչների ու սովորողների առջև շատ հաճախ ծառացող որակական և հարաբերական ածականների տարբերակման դժվարությունների հաղթահարման լուծումներ:

Նիստը շարունակվեց երեք մասնաճյուղերում, որտեղ անդրադարձան հայոց լեզվի ամենատարբեր խնդիրներին, կրթության հին ու նոր մեթոդներին:

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Շատ կարևոր է ցանկացած գիտակրթական իրողություն դարձնել տոն. կենսաբազմազանության արդի հիմնախնդիրներին և նրանց լուծման ուղիներին նվիրված գիտագործնական

գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը: Նա շնորհավորեց հատկապես այն ուսանողներին, որոնք մասնագետ չեն, բայց ոտք են դրել նոր մասնագիտության դաշտ և գիտական հետազոտությամբ հանդես գալու համարձակություն դրսևորել:

Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ սա կլինի մտքերի ու գաղափարների փոխանակման կարևոր միջավայր՝ դրանք կրթության ու գիտության դաշտ տեղափոխելու, կյանքի կոչելու և պտուղները քաղելու ուղղությամբ:

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 9-ին անցկացվեց Կենսաբաբազմազանության արդի հիմնախնդիրներին և նրանց լուծման ուղիներին նվիրված 2-րդ գիտագործնական գիտաժողովը, որը կազմակերպվել էր Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ: Գիտաժողովի զեկուցողները մագիստրոսներն էին, որոնք գիտական ղեկավարների աջակցությամբ վեր հանեցին ոլորտի արդի խնդիրներ, հանդես եկան ամփոփիչ եզրակացություններով ու առաջարկներով: Հետաքրքիր էր նաև այն, որ զեկուցումների հեղինակները ոչ մասնագետներ էին, ապագա ուսուցիչներ, որոնց համար ևս անհրաժեշտ էր տեղեկացված լինել քննարկվող հարցերին մասին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Սիրինե Շողերյանը, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կենսաբանական գիտությունների դոկտոր Սամվել Պիպոյանը:

«Գիտաժողովը նվիրված է կենսաբազմազանությանը՝ երկրի վրա կյանքի հիմքին: Կենսաբազմազանության թեման այսօր ավելի քան արդիական է. բնության պահպանումը և էկոհամակարգերի վերականգնումը կայուն զարգացման ու առողջ մոլորակի բանալին»,-ասաց Սիրինե Շողերյանը:

Նա գիտաժողովի հարթակը կարևորեց երիտասարդ գիտնականների համար՝ որպես փորձի ու գաղափարների փոխանակման հնարավորություն՝ կլիմայի փոփոխություններին վերաբերող հարցերի քննարկումից մինչև սննդի անվտանգության հարցեր:

Գիտաժողովում լսեցին շուրջ 20 զեկուցում. մագիստրոսներն անդրադարձան ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության օրենսդրական խնդիրներին, կենդանական աշխարհի պահպանությունը կարգավորող նորմատիվ կարգավորումներին, հանրապետության ջրամբարների ձկնային պաշարների ավելացմանը որպես երկրի պարենային անվտանգության երաշխիք, բուսական բազմազանությանը և նրա հիմնախնդիրներին, քաղաքաշինության ազդեցությանը կենսաբազմազանության վրա և այլ հարցերի:

«2026 թվականին Հայաստանում ընդունելու ենք «ԳՈՎ-17» միջոցառումը. աշխարհի 120 երկրներից Հայաստանն ընդունելու է պատվիրակություն՝ շուրջ 30 հազար մարդ: ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվելիք համաշխարհային միջոցառումը նվիրվելու է կենսաբազմազանության կոնվենցիայի պայմանների բարելավմանը: Մեր գիտաժողովը նպատակաուղղված է նաև այդ խնդրի լուծմանը. ուսանողների և աշակերտների մակարդակով իրազեկում ենք այդ կոնվենցիայի դրույթների մասին, տալիս անհրաժեշտ տեղեկություններ, միաժամանակ հանրայնացնում ենք այն խնդիրները, որոնք տեսնում ենք այդ ոլորտում:

Մագիստրոսների մեծ մասը կենսաբանական բազային կրթություն չունի, և խնդիր ենք դրել, որ նրանք հետազոտությունների միջոցով խորանան այդ ոլորտում»,-ասաց Սամվել Պիպոյանը՝ ապագա ուսուցիչների համար կարևորելով այդ խնդիրներին տեղեկացված լինելը: Ամբիոնի վարիչը կարևորեց նախաձեռնությունը և վստահեցրեց, որ ուսանողների առաջարկությունները կհասցնեն համապատասխան գերատեսչություններին:

Մարդկության աճը բերում է նրան, որ տարբեր էկոլոգիական խնդիրներ են առաջանում, որոնք ազդում են կենսաբազմազանության վրա: Կարծում եմ նման միջոցառումները հնարավորություն կտան նորովի նայել վերոհիշյալ խնդիրներին և լուծումներ գտնել՝ ամփոփեց ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը:

Սիլվա Ասրյան

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԼԻՆԵՆ

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Մկրտչյանը դեկտեմբերի 10-ին հանդիպեց համալսարանի Ուսանողական խորհրդի անդամների և ֆակուլտետային ակտիվի հետ: Հանդիպումը ճանաչողական էր. նա ծանոթացավ ուսանողներից յուրաքանչյուրին՝ հասարակական պաշտոնից մինչև արմատներ ու նախասիրություններ:

Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ հանդիպումները տարբեր ձևաչափերով շարունակական կլինեն՝ փոխշփումներ, դասախոսություններ, հանդիպումներ:

Նա ուսանողներին պատմեց իր արմատների, պատմաբանի մասնագիտության ընտրության մասին. եթե նորից մասնագիտություն ընտրելու հնարավորություն ընձեռվի՝ նորից կընտրի պատմաբանի մասնագիտությունը:

Ուսանողների հետ անկեղծ երկխոսություն ծավալվեց, որի ընթացքում ռեկտորի պաշտոնակատարը ուսանողներին հորդորեց՝ ներքին հայացք գցել իրենց ցանկություններին և հասկանալ՝ արդյո՞ք ճիշտ մասնագիտություն են ընտրել, արժևորեն այն և մշակեն նպատակներին հասնելու քայլաշարը:

Լիլիթ Մկրտչյանը փորձեց հասկանալ՝ ուսանողները սիրո՞ւմ են իրենց համալսարանն ու մասնագիտությունը, ի՞նչ են ակնկալում բուհից:

Դիմելով ուսանողներին՝ Լիլիթ Մկրտչյանն ասաց. «Մեծ պատիվ է լինել Մանկավարժական համալսարանի ուսանող, դա հպարտություն է, միաժամանակ՝ մեծ պատասխանատվություն: Դուք պետք է գնահատեք ու արժևորեք դա : Տարիներ հետո դուք սերունդ եք կրթելու, ձևավորելու քաղաքացի: Դուք հասարակություն եք կառուցելու՝ դա մեծ առաքելություն է»:

Ռեկտորի պաշտոնակատարը մեզանում ուսուցչի հեղինակության կեղծ թեզերին հակադրվեց՝ ասելով, որ յուրաքանչյուրի գործունեությամբ է պայմանավորված ուսուցչի կերպարի արժևորումը:

Ուսանողների հետ ակտիվ քննարկում տեղի ունեցավ մասնագիտության ընտրության շուրջ և կարծիքների փոխանակում, ուսումնական գործընթացի ու տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողները հանդես եկան առաջարկություններով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ «ԳՈՒՅՆ, ՀԱՄ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ընդարձակ սրահը վերածվել էր պատմամշակութային արժեքների ու ավանդույթների ներկայացման հետաքրքիր ու գունեղ միջավայրի. ֆակուլտետի Կերպարվեստի ամբիոնի մասնագիտությունների 1-ին կուրսի ուսանողները, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Եղյանի գլխավորությամբ, «Պատմություն» առարկայի դասընթացի շրջանակում ներկայացրել էին նախագծային աշխատանք՝ Մեծ Հայքի 15 աշխարհները՝ «Գույն, համ, պատմություն» խորագրով:

«Ոչ մասնագիտական ֆակուլտետի ուսանողների հետազոտական աշխատանքի միջոցով փորձել ենք «Պատմություն» առարկան մոտեցնել «Արվեստ-արհեստ» մասնագիտություններին, որպեսզի առարկան ավելի կիրառական դառնա՝ հարստացնելով ուսանողների գիտելիքները»,-ասաց նախագծային աշխատանքի ղեկավար Մարիամ Եղյանը:

Ուսանողները համատեղել էին պատմությունն ու արվեստը՝ միջառարկայական կապեր ստեղծելով արվեստ-արհեստ-դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությունների և պատմություն առարկայի միջև: Նրանք ներկայացրին Մեծ Հայքի յուրաքանչյուր աշխարհին բնորոշ խոհանոցը, սովորույթները, հայ ազգային հագուստ-տարազները, որ պատմականորեն կրել են Հայաստանի տարբեր մարզերում, տիկնիկներ՝ ազգային տարազներով, իսկ յուրաքանչյուր նահանգ ներկայացնում էին նաև տարազի տարրեր պարունակող ժամանակակից հագուստներով, որ մոդելավորել ու կարել էին հենց իրենք:

Ուսանողները մեծ պատրաստակամությամբ ու սիրով պատրաստել էին պատմական Հայաստանի տարբեր նահանգների առանձնահատկությունները բնորոշող հուշանվերներ. գունեղ ու ճաշակով ստեղծված ձեռքի աշխատանքներ, որ առանձին հմայք էին տալիս նահանգները ներկայացնող սեղաններին՝ Գուգարքից մինչև Այրարատ, Բարձր Հայքից մինչև Տուրուբերան, Վասպուրականից մինչև մյուս աշխարհները:

Նախագծի նպատակն էր վերծանել և վերամաստավորել Մեծ Հայքի 15 աշխարհների պատմամշակութային արժեքները՝ ժամանակակից մշակութային, տնտեսական և կրթական միջավայրում ապահովելով դրանց ճանաչելիությունն ու կիրառականությունը, երիտասարդ սերնդի մեջ հետաքրքրություն առաջացնելու ազգային հագուստների ու զարդարվեստի հանդեպ՝ դրանք ներառելու ժամանակակից դիզայնի ու հագուստների նորաձևության մեջ, որովհետև տարազը ոչ միայն հագուստի ձև է, որ ձևավորվել է դարերի ընթացքում, այլև մշակութային, ազգային և հոգևոր ինքնության արտահայտություն:

Ուսանողները հաջողությամբ իրականացրին նախագծի՝ իրենց առջև դրված նպատակները՝ ձևավորել և զարգացնել 21-րդ դարի հմտություններ, հետազոտելու կարողություններ, խթանել նախաձեռնողականությունը, ստեղծել պատմություն-կերպարվեստ միջառարկայական կապեր և այլն:

Նախագծային աշխատանքի մասնակիցների աշխատանքը գնահատեցին ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը և Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսորի պաշտոնակատար Էդիկ Գևորգյանը:

Պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց ուսանողներին՝ նախագծային աշխատանքին նվիրումով, պատասխանատվությամբ ու ոգևորությամբ մոտենալու համար, նաև վստահեցրեց, որ ուսումնառության ողջ ընթացքում նրանք շարունակելու են գիտելիքներ կուտակել, դառնալ մեր դարավոր արժեքների կրողները և դրանք փոխանցել սերունդներին:

Դեկան Արա Հակոբյանը բարձր գնահատեց ներկայացված աշխատանքը, որ ուսանողները կատարել ու ներկայացրել էին սիրով:

«Դուք իրապես սիրում եք հայոց պատմությունը, շատ շնորհակալ մասնագիտություն եք ընտրել, բայց այդ մասնագիտության մեջ դուք կարող եք կայանալ մեր ազգային ավանդույթների ու պատմական իմացողության հիման վրա՝ առաջին հերթին՝ հայոց պատմության և, ինչու չէ, համաշխարհային պատմության, որտեղ արվեստն ու արհեստը սահմաններ չունեն»,-ասաց Հայոց պատմության ամբիոնի վարիչ Էդիկ Գևորգյանը՝ շնորհակալություն հայտնելով դոցենտ Մարիամ Եղյանին և փաստելով՝ սա նախագծային ուսուցման լավագույն օրինակն էր:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԵՆՍԱԿԵՐՊ Է», - ԱՍՈՒՄ Է ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԸ

«Կամավորական աշխատանքը կենսակերպ է, մարդու էության մի հատվածը, որը հնարավորություն է տալիս ապրել, ստեղծել, ծանոթանալ, դիքավորվել, և, ի վերջո, որոշումներ կայացնել.Կամավորների միջազգային օրվա առթիվ ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց ուսանողներին և գործընկերներին հորդորեց՝ մեր երիտասարդներին ավելի լայն հնարավորություններ տվեք. նրանք մեր ներկան ու ապագան են:

Դիմելով ուսանողներին՝ նա ասաց. «Ձեր հնարավորությունները լիարժեք օգտագործեք, գնահատեք ձեր ինքնությունը, ինքնության տարբեր ուղղություններով առաջ շարժվեք և բացահայտեք աշխարհը»:

Ուսանողական խորհրդին շնորհակալություն հայտնելով ակտիվ աշխատանքի համար՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ մեր գործունեությունն ամբողջովին միտված է բարելավելու, համապատասխան միջավայր ստեղծելու հենց ձեզ համար: Մեր գործունեության հիմքում ուսանողն է, նրա բարեկեցությունը և իմացության մակարդակի բարձրացումը: Նա ուսանողներին մաղթեց՝ գնահատել ունեցածը և ավելի հաստատուն քայլերով առաջ շարժվել:

Դեկտեմբերի 5-ին աշխարհը նշում է Կամավորների միջազգային օրը, որի նպատակն է ընդգծել կամավորական աշխատանքի արժեքը, կարևորել հասարակական կյանքում ակտիվ բարեգործական գործունեությունը և շնորհակալություն հայտնել այն մարդկանց, որոնք իրենց գիտելիքն ու ժամանակը նվիրում են հանրային բարօրությանը. ՀՊՄՀ ՈՒԽ փոխնախագահ Արուս Այվազյանն է վարում օրվան նվիրված միջոցառումը, որին հրավիրվել էին հայաստանյան բոլոր այն գործընկերները, որոնց կազմակերպությունների հետ համագործակցել էին Մանկավարժական համալսարանի ուսանողները:

Ուսանողները գիտեն՝ «կամավորականությունը ոչ միայն բարեգործական աշխատանք է, այլև լուրջ կրթական և արժեհամակարգային գործընթաց, որ ձևավորում է առաջնորդական մտածողություն, քաղաքացիական պատասխանատվություն և գործընկերային համագործակցության մշակույթ», և հպարտ են, որ այդ արժեքների կրողներն են:

Օրը խորհրդանշվեց կամավորական աշխատանքի արժևորմամբ. ակտիվ կամավորական աշխատանք իրականացրած ուսանողներին գործընկերային կազմակերպությունների ղեկավարները շնորհակալագրեր հանձնեցին՝ պատասխանատվությամբ ու նվիրվածությամբ համագործակցելու և հասարակական, կրթական, համայնքային կարևոր ծրագրերի իրականացմանը նպաստելու համար: Ուսանողներին շնորհավորեց և շնորհակալագրեր հանձնեց նաև Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը՝ ասելով. «Կամավորները այն մարդիկ են, որոնց հետ կարողանում ես ճանապարհ գնալ»:

Գործընկերները լիահույս են՝ կամավոր՝ նշանակում է բարիք ստեղծող հանրային մարդ: Այդ համատեքստում նրանք արժևորեցին Մանկավարժական համալսարանի դերն ու ակտիվ կամավորական մասնակցությունը հանրային տարբեր միջոցառումների:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ո՞Վ ԷՐ...

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառեժիսուրայի 3-րդ կուրսի ուսանողները Շենգավիթի Պատանեկան ստեղծագործության կենտրոնի սաների հետ հանդիսատեսի դատին հանձնեցին մի ներկայացում, որը վերնագրված էր՝ «Անունդ ի՞նչ էր»: Բեմադրության ռեժիսոր, ամբիոնի պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանը հերոսներին ներկայացրել էր իրական

կյանքի և բոմժանոցի՝ աղբավայրի բնակիչների հակադրության մեջ:

Առաջին հայացքից թվում է, թե իրականում աղբավայրի անտուն մարդիկ ավելի ուրախ են, քան ներկայացման գլխավոր հերոս երիտասարդը, որը սեր է փնտրում և իրական կյանքում չգտնելով այն, մի աղջկա հետ, որի անունն անգամ չգիտի, եկել է աղբավայր: Աղջիկն էլ չի հասկանում՝ ինչո՞ւ են հանդիպում աղբավայրում. սկզբում նա խորշում է շրջապատի կեղտից ու մարդկանցից, սակայն կարծես աստիճանաբար հաշտվում է այդ իրականության հետ, անգամ վզնոցն է նվիրում բոմժերից մեկին:

Հետաքրքիր է նաև ցուցանակը, որ կախված է աղբավայրում՝ «Աղբ չթափել»: Հետաքրքիր է նաև այն, որ թշվառ աղքատության մեջ անտուն թափառականների միջավայրն ավելի ուրախ է, քան դրսի աշխարհի մարդկանց միջավայրը: Երիտասարդ տղան հիասթափվել է աշխարհից ու անիմաստ երազելուց, նրան տանջում են բազմաթիվ մտքեր, ինչպես, օրինակ, ինչո՞ւ են մարդիկ վախենում սիրել...

Կյանքի բացասական, տխուր կողմերն են թերևս ստիպել նրան ինչ-որ բան փնտրել աղբավայրի բնակիչների միջավայրում, հասկանալ կամ կարեկցել նրանց...Այդ մտքերով համակում է նաև աղջկան, որը կարծես արդեն այլ հրապուրանքներ է փնտրում կյանքից դուրս մնացած այս մարդկանց շրջանում...

Բայց ոչ...Երբ թվում էր, որ արդեն սիրո վախը հաղթահարված է՝ կրակոցներ են լսվում. սպանվում է աղջիկը, ապա տղան: Աղբավայրի փոքրիկ տղան հուզված փնտրում է կրակողին՝ ո՞վ էր...

Պարային աշխույժ ռիթմերով երաժշտական ներկայացումը առօրյա կյանքի ստվերոտ ու տխուր կողմերի ոչ միայն քննադատությունն է, այլև նրա վառ արտացոլումը... Կյանքից դուրս մնացած մարդկանց աշխարհում և՛ տարօրինակ տխրություն կա, և՛ շինծու ուրախություն, բայց նաև մի տեղից թռցրած հացը միասին կիսելու համերաշխություն:

Շնորհակալություն Աիդա Հովհաննիսյանին, որը մշտապես գտնում է հանդիսատեսին մատուցելու բովանդակություն ու ասելիք: Ներկայացման սկզբում

էլ նրա նախաբանը սթափեցնող է՝ այս կյանքում այնքան վատ բաներ կան, այնքան անճաշակություն...

Բեմադրիչը փորձում է ներկայացումից ներկայացում ցուցադրել մեր կյանքն իր ողջ շքեղությամբ՝ ուրախ ու տխուր, լավ ու վատ կողմերով, որպեսզի մարդը կարողանա մարդ մնալ...Սովորեցնում է ուսանողներին ու հանդիսատեսին՝ բոլոր դեպքերում պետք է մարդ մնալ, մարդկային գծերով հաղթել այս աշխարհի անարդարություններին և սիրել իրար: Թե չէ անհայտ մեկի կրակոցից կարող են ընդհատվել կյանքեր, կարող են կիսատ մնալ շատ երազանքներ... Իսկ կյանքը ապրելու և սիրելու համար է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ԵՐՋԱՆԻԿ Է ԱՅՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ, ՈՐԸ ԿՍՏԱՆԱ «ԺԱՄԱՆԱԿԻ» ՄՐՑԱՆԱԿԸ»,- ԱՍՈՒՄ Է ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐ ՎԻԳԵՆ ՉԱԼԴՐԱՆՅԱՆԸ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահիճում դեկտեմբերի 18-ին կազմակերպվել էր հանդիպում հանրաճանաչ կինոռեժիսոր, հայ կինոյի առանցքային դեմքերից մեկի՝ Վիգեն Չալդրանյանի հետ, որն այս օրերին նշում է իր ծննդյան 70-ամյակը: Հանդիպմանը ներկա էին նաև «Լռության սիմֆոնիա» ֆիլմի գլխավոր դերակատար, ճանաչված դերասան Միքայել Պողոսյանը և գիտական խորհրդատու, ՀՀ

նախկին գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանը:

Ներկաները դիտեցին «Լռության սիմֆոնիա» ֆիլմը, որը հոգեբուժարանի մասին է և նկարահանումներն էլ արվել են հոգեբուժարանում: Ֆիլմի սցենարը գրվել է Վիգեն Չալդրանյանի և Գուրգեն Խանջյանի համահեղինակությամբ:

Թեև ֆիլմը 25 տարվա վաղեմություն ունի, բայց այսօր էլ արդիական է, ուղերձները՝ նաև մեր օրոյա: Ռեժիսորի երկու տասնյակ ֆիլմերի մեջ «Լռության սիմֆոնիա»-ն Հայկինոյի պատմության մեջ առաջին հայկական ֆիլմն է, որ 2002 թվականին ներկայացվել է ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակաբաշխությանը: Երկու տարի հոլիվուդյան մամուլը գրում էր ֆիլմի մասին, ինչը հպարտության զգացումով էր համակել ռեժիսորին:

Իմ հերոսներն առաջինն էին, որ ճանապարհեցին 20-րդ դարը և դիմավորեցին երրորդ հազարամյակը՝ ասաց Վիգեն Չալդրանյանը՝ միաժամանակ հաճելիորեն նկատելով, որ իր բոլոր ֆիլմերը հոբելյանական են:

Բազմաթիվ մրցանակների է արժանացել, բայց կարծում է՝ երջանիկ է այն արվեստագետը, որը կստանա «Ժամանակի» մրցանակը,-ասում է կինոռեժիսոր, սցենարիստ Վիգեն Չալդրանյանը

Հրաշալի մի ֆիլմ՝ նույնքան հրաշալի դերասաններով՝ Միքայել Պողոսյան, Վլադիմիր Մսրյան, Կարեն Ջանիբեկյան, Ժան-Պիեր Նշանյան և ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրն իր կերտած կերպարով արվեստի գագաթնակետին էր...

Համալսարանի Աշխատակազմի և միջազգային հարցերով պրոռեկտոր Անի Հակոբյանը կարևորեց նման մշակութային հանդիպումները և ընդգծեց ֆիլմում սիմվոլիզմի բովանդակային դրսևորումները, որի գագաթնակտն, իր կարծիքով, հուդայի համբույրն էր, հին ու նոր հազարամյակների խաչման կիզակետում հայտնված մարդկանց հոգեբանությունն ու վարքը, հասարակական միջավայրի պատկերը:

Պրոռեկտորը խոսեց արվեստագետ մտավորականի հսկայական ծանր բեռի մասին՝ տեսնել ավելին, քան սովորական մարդը:

«Ֆիլմը ծանր ապրումների տեղիք տվեց. ի՞նչ զգացողություններ ու մտքեր արթնացրեց ուսանողների մեջ, ինչպե՞ս պատասխանել բարձրացված հարցերին.դա արդեն իրենց տիրույթում է, բայց մի բան պարզ է՝ արվեստը ձևավորում է աշխարհայացք ու արժեհամակարգ»,-ամփոփեց պրոռեկտորը:

«Արվեստի գործը դիտելուց հետո գնահատականները կարևոր չեն, կարևորը այն էմոցիոնալ էներգիան է ու բարձր ճաշակը, որը փոխանցվեց դիտողներին,-ասաց համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառեժիսուրայի ամբիոնի վարիչ Արմեն Էլբակյանը, որը Վիգեն Չալդրանյանի համակուրսեցին է ու մանկության ընկերը: -Հրաշալի ֆիլմ, որտեղ դուք տեսաք՝ ինչ քաոս է տիրում աշխարհում ու մարդկանց հոգիներում: Այսօր էլ՝ 25 տարի անց, երբ աշխարհում նորից կա այդ քաոսը, ֆիլմը կօգնի մարդկությանը՝ ազատագրվել այդ քաոսից»:

Գիտական խորհրդական, հոգեբույժ Սամվել Թորոսյանը խոսեց Վիգեն Չալդրանյանի տաղանդի, հանճարեղ մտահղացման, դերասանների կատարյալ խաղի մասին ու հետաքրքիր դրվագներ պատմեց այն մասին, երբ հոգեբուժարանը վերածվել էր նկարահանումների հրապարակի.«Սա մարդասիրական ֆիլմ է, որը ցույց է տալիս՝ ինչպես մեկ մարդ կարող է փոխել միջավայրը, որ հոգեբուժարանի հիվանդները՝ աստծու կողմից պատժված մարդիկ, իրենց երջանիկ զգան. չէ՞ որ ցանկացած մարդու հետ դա կարող է պատահել: Մասնավորապես Կոնդի «գժոն» իր բարությամբ ու վերաբերմունքով օգնեց հիվանդներին՝ «գժերին», որոնց այսպես է որակավորում հասարակությունը, մինչդեռ «գժերը» դրսում են, ոչ թե ներսում»:

«Բացարձակ երջանկությունը ծառայելու մեջ է, ոչ թե ծառայեցնելու»-վստահեցրեց Վիգեն Չալդրանյանը, ում ֆիլմում նախկին հանցագործ գլխավոր հերոս-Միքայել Պողոսյանը հետ կանգնեց իր ճանապարհից՝ ընտրելով լույսի ճանապարհը:

Սա ֆիլմի ուղերձն է՝ ընտրեք լույսի ճանապարհը:

Հանդիպումն ավարտվեց հարց ու պատասխանով, որտեղ հարցերի մեծ մասը վերաբերում էր Չալդրանյանի «մեծ լռությանը». բառերն ու երաժշտությունը անցնում են, իսկ լռությունը մնում է...

Մեր հասարակությունը կարիք ունի լավ ֆիլմերի՝ լիահույս են դասախոսները և ուսանողները, ապագա արվեստագետները, որոնց Չալդրանյանը պատմում է կերպարների ընտրության, նկարահանման հրապարակում դերասանների կողմից արվող իմպրովիզների և այլ հարցերի շուրջ իր մոտեցումների մասին:

«Ամեն աստվածային բան ծնվում է լռության մեջ: Այսօր մեր ազգին պակասում է այդ լռության ձայնը. 21-րդ դարում պետք է մի պահ կանգ առնել ու լսել լռության ձայնը»,-ասաց օրվա մեղավորը՝ Վիգեն Չալդրանյան հանրահռչակ ռեժիսորը, սցենարիստն ու դերասանը, ում «լռությունն իսկապես աղաղակող է»:

Ներկաները փաստեցին՝ Վիգեն Չալդրանյանը մեծ ներդրում արեց մեր իրականության մեջ, նոր լիցքեր հաղորդեց հայ կինոարվեստին՝ բերելով իր սերն ու մոտեցումները.«Իմ ռեժիսուրայում ես ձուլվում եմ դերասանի մեջ և իմ փիլիսոփայությունը ներկայացնում դերասանի միջոցով»:

Վիգեն Չալդրանյանի մարդասիրական ու մարդակենտրոն փիլիսոփայությունը ժամանակների համար է, և նա իսկապես արժանի է «ժամանակի մրցանակին»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Մարտահրավերներով լի ժամանակաշրջանում շատ կարևոր է ուսուցչի դիրքորոշումը դասավանդման գործընթացում հանդիպող մարտահրավերների և դրանցից ելքեր փնտրելու գործում: Հենց դրան էր միտված կրթության դոկտոր, պրոֆեսոր Եփրեմ Մեհրանյանի այցը Մանկավարժական համալսարան, որտեղ նա հանդիպեց Պատմության և հասարակագիտության և Սկզբնական կրթության ֆակուլտետների դասախոսներին ու Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատրանտներին:

Պրոֆեսորը կրթական գործունեություն է ծավալել ԱՄՆ-ում, Սան Ֆրանցիսկոյում դպրոց է ղեկավարել, իսկ Ջորջիայի նահանգում աշխատել է համալսարանում, մասնակցել դպրոցների բարելավման և ուսուցիչների վերապատրաստման բազմաթիվ ծրագրերի: Այժմ էլ պարբերաբար դասավանդման մեթոդներին նվիրված դասընթացներ է վարում ԵՊՀ-ում:

Եփրեմ Միհրանյանը Մանկավարժական համալսարանի դասախոսների և ուսանների հետ խոսեց աշխարհի գլոբալացման հետ կապված և դասավանդման գործընթացում հանդիպող մարտահրավերների, ինչպես նաև լուծումներ գտնելու տարբերակների մասին՝ միաժամանակ փորձելով հասկանալ դասախոսների և ուսանողների վերաբերմունքը ներկայացված հարցերի շուրջ:

Նա լսարանին ներկայացրել էր դասավանդման ընթացքի մարտահրավերներ պատկերող լուսանկարների շարք, որի շուրջ էլ ծավալվեց քննարկումը: Դասախոսները և մագիստրանտները մեկնաբանեցին լուսանկարները և իրական լուծումներ առաջարկեցին:

Կրթության դոկտորը խոսեց դասավանդման իր մեթոդների ու մոտեցումների մասին և փորձեց իր ներկայացրած մեթոդների գործնական կիրառությամբ հասկանալ դասախոսների և ապագա ուսուցիչների մանկավարժական մոտեցումները՝ անհատական վերաբերմունք դրսևորելով յուրաքանչյուրի մեկնաբանման ու մարտահրավերների լուծման առաջարկների վերաբերյալ:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Թանգարան-դպրոց համագործակցությունը կրթության արդիականացման առանցքային ուղղություններից է: Այն հնարավորություն է տալիս ձևավորելու բազմակողմանի զարգացած սերունդ, որը չի սահմանափակվում միայն դասագրքային գիտելիքներով, այլ կարողանում է կիրառել դրանք իրական կյանքում, գնահատել մշակութային արժեքները և ստանձնել պատասխանատվություն սեփական ինքնության պահպանման համար», - «Թանգարանի և դպրոցի համագործակցության խնդիրները» ուսումնական ձեռնարկի նախաբանում գրում է ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Մանկավարժական համալսարանում կազմակերպվել էր համալսարանի պատմության թանգարանի տնօրեն, Հայաստանի թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալվարդ Գրիգորյանի «Թանգարանի և դպրոցի համագործակցության խնդիրները» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը: Հանդիպմանը մասնակցում էին համալսարանի ղեկավարությունը, դասախոսներ, հանրապետության դպրոցների ուսուցիչներ և թանգարանային մասնագետներ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի երաշխավորմամբ և ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ «Թանգարանի կրթական հնարավորությունները ֆորմալ կրթության ոլորտում» ծրագրի շրջանակներում:

Ուսումնական ձեռնարկում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է թանգարանի և դպրոցի համագործակցության անհրաժեշտությունը, այդ համագործակցության կազմակերպման նպատակներն ու խնդիրները, դպրոցական թանգարանների տեսակները, հայրենագիտության դերն ու նշանակությունը, թանգարանների կազմակերպման ձևերն ու միջազգային տարբեր թանգարանների փորձը:

Շնորհանդեսը վերոհիշյալ համագործակցությանը նվիրված մի ուղերձ էր, որտեղ ելույթ ունեցողները կարևորեցին այդ համագործակցության անհրաժեշտությունը:

Ձեռնարկի ստեղծմանը նախորդած սեմինար-վերապատրաստումից պարզ դարձավ, որ թանգարան-դպրոց շատ անելիքներ կան՝ ասաց ՀՊՄՀ թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը՝ վստա-

հեցնելով, որ գիրքը ծնվեց համատեղ աշխատանքի և կրթական ծրագրերի մշակման արդյունքում, և որ թանգարանը հսկայական կրթական ներուժ ունի դպրոցին աջակցելու համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը հետադարձ հայացքով ներկայացրեց՝ համալսարանի թանգարանի հետ համագործակցությունն ինստիտուցիոնալ դաշտ բերելու ընթացքը երկու տասնամյակի պատմություն ունի, իսկ կրթության և մշակութային քաղաքականության համադրումը ԿԳՄՍ նախարարության առաջնահերթություններից է և դիտարկվում է մարդկային կապիտալի զարգացման համատեքստում: Բանախոսը կարևորեց մշակութային բաղադրիչը, վստահեցրեց՝ թանգարանների ներուժն ու հնարավորություններն անսահման են, և որ շեշտը պետք է դնել գործնական քայլերի վրա:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ողջունեց հանդիպումը և ուսուցիչներին վստահեցրեց՝ մանկավարժական համալսարանը կլինի այն միջավայրը, որտեղ կգտնեն իրենց հուզող հարցերի պատասխանները:

Իրականացված կրթական ծրագիրը մի մեծ քաղաքականության փոքրիկ մաս է, պետք է հասկանալ՝ ինչ է կրթությունը, ինչի համար է և ինչպես պետք է իրականացնել այն՝ աշակերտի կարիքները փաստահեն դարձնելու համար:

ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ այս ծրագրի նպատակն էր ստեղծել լրացուցիչ գործիքներ ուսուցիչների համար՝ դասերն ավելի պատկերավոր ու հետաքրքիր դարձնելու համար:

«Հանրապետության բոլոր մշակութային հուշակոթողների քարտեզագրումը հնարավորություն տվեց դասերն անցկացնել հենց այդ վայրերում, իսկ ստեղծված ուղեցույցը ուսուցիչների համար օգնություն էր՝ ինչպես օգտագործել թանգարանների ու գրադարանների ներուժը դասերին, որին հաջորդեց ուսուցիչների և թանգարանային մասնագետների համատեղ վերապատրաստումը»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ ձեռնարկը ծնվեց որպես այդ ամենի վերջնարդյունք, որտեղ Մանկավարժական համալսարանը առաջնային դեր է ունեցել:

Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, ձեռնարկի խմբագիր Ամատունի Վիրաբյանը վստահեցրեց՝ մարդու զարգացման, նրա մշակութային ձևավորման գործում դպրոցից հետո ամենակարևորը թանգարանն է: Լինելով աշխարհի շատ թանգարաններում՝ նա համոզվել է՝ թանգարանը մնում է յուրաքանչյուր տարածաշրջանի ժողովրդի մշակութային պատմության կարևոր մասը:

Հանդիպման վերջում ելույթ ունեցան Մանկավարժական համալսարանի ուսանող-շրջանավարտներ, Չարենցի թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը, ուսուցիչներ Լիանա Նազարյանը և Կարինե Ավետիսյանը, որոնք կարևորեցին ձեռնարկի ստեղծման անհրաժեշտությունը թանգարան-դպրոց համագործակցության համատեքստում:

Ձեռնարկի վերջաբանում Լիլիթ Մկրտչյանն ընդգծում է ուսուցիչների դերը թանգարան-դպրոց համագործակցությունում, նրանց հորդորում «դասերն անցկացնել թանգարանային միջավայրում՝ որպես ուսուցման օրգանական շարունակություն», իսկ թանգարանային մասնագետներին՝ «սերունդներին փոխանցել մշակութային արժեքները ոչ թե որպես անցյալից մնացած հուշ, այլ որպես ապագան կերտելու կենսական հիմք»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ՍՓԻՒՌՔ» ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը դեկտեմբերի 18-ին բոլորում է 30 տարին: 1995-ին գործունեությունն սկսած և 2001-ին «Հայաստան» համահայկական հիմադրամի միջոցներով նորոգված կենտրոնը հիմադիր տնօրեն պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի ղեկավարությամբ անցնող տարիներին ըստ էության դարձել է հայրենիք-Սփյուռք գիտամշակութային հարաբերությունների ձևավորման առաջին հաստատություններից:

Անցնող տարիներին արևմտահայագիտական առարկաների գծով այստեղ վերապատրաստվել են հազարավոր ուսուցիչներ ինչպես Սփյուռքից (4 տասնյակի հասնող երկրներից), այնպես էլ Երևանից, ՀՀ մարզերից և Արցախից, հայրենիքի դպրոցներում անցկացվել են արևմտահայ լեզվի և գրականության մեկամյա փորձնական ծրագրեր: Կազմակերպվել են տասնյակ գիտաժողովներ, տպագրվել նյութերի ժողովածուներ: Կենտրոնի կազմում գործում է շուրջ 7.000 կտոր գրականություն ունեցող սփյուռքագիտական ընթերցասրահը:

Հոբելյանական տարին նշանավորվել է Վենետիկի հայագիտական դասընթացների 40-ամյակի հոբելենական հանդիսությանը Սուրեն Դանիելյանի «Արևմտահայ կրթության ներկան և հեռանկարները» և Հայագիտական միջազգային կոնգրեսում Քնարիկ Աբրահամյանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի հայագիտական գործունեության շուրջ. մարտահրավերներ և միտումներ» զեկուցումներով, Հակոբ Օշականի «Ամբողջական գործեր»-ի երկրորդ հատորի («Ծակ-պտուկը» վեպը) լույսընծայումով (առաջաբանի հեղինակ և գլխավոր խմբագիր՝ Ս. Դանիելյան, պատասխանատու խմբագիր՝ Ք. Աբրահամյան):

Իբրև տարվա ամփոփում՝ լույս է տեսել Ք. Աբրահամյանի «Գրական ազդեցությունների խնդիրներ արևմտահայ նամակագրության մեջ» գիրքը, որը կենտրոնի 53-րդ հրատարակությունն է: Այն տպագրվել է ՀՀ ԿԳՄՄՆ «Աջակցություն ստեղծագործողներին, հետազոտողներին և թարգմանիչներին» ծրագրի շրջանակներում և ՀՊՄՀ Գիտական խորհրդի երաշխավորությամբ: Խմբագիրը Սուրեն Դանիելյանն է, արտաքին գրախոսներն են պրոֆեսոր Ալբերտ Մակարյանը և պրոֆեսորի պաշտոնակատար Եվա Մնացականյանը: Գրքում դիտարկվել է հիմականում նոր շրջանին վերաբերող հեղինակների նամակագրական ժառանգությունը: Ցույց են տրվել ինչպես օտար (մեծ մասով՝ ֆրանսիական), այնպես էլ հայ գրականության մեջ ուրվագծվող հարաբերությունները, արևելահայ և արևմտահայ գրականությունների երկխոսական կապերը: Ուսումնասիրությունները հենվել են ոչ միայն մամուլում և առանձին հրատարակված նամականիների, այլև ձեռագրային ժառանգության վրա:

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

«Ունե՞ս պետականություն՝ որպես ազգ կապրես, չունե՞ս պետականություն՝ որպես ազգ գոյություն չես ունենա. ահա պատմավեպի դասերը և ուղերձները»,- ասում է «Գագիկ Երկրորդ» պատմաքաղաքական վեպի հեղինակ, պատմաբան, մատենագետ, մշակութաբան, ՀՊՄՀ գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը:

Այս պատմավեպով հեղինակը չի դիտարկել միայն պատմությունը, այլ պատմությունը դիտարկել է նաև այսօրվա և՛ ապագայի համատեքստում: Պատմավեպի հիմքում նա դրել է սեփական հայրենիքը սիրելու, սեփական հայրենիքի ոչ թե պատրանքը, այլ իրականությունն ունենալու գաղափարը:

Գագիկ Երկրորդը Շիրակի թագավորության վերջին արքան է եղել, որին 1045 թվականին հրավիրել են Բյուզանդիա և կալանել: Սրանով Հայաստանի տարածքում վերջ է դրվել Բագրատունիների գահակալությանը:

«Թեև 1045 թվականին Հայաստանում վերացել է Բագրատունիների թագավորական գահակալությունը, բայց Գագիկ Երկրորդը, որպես Բյուզանդիայի կայսրության գերի, տեղափոխվել է Պիզու քաղաք՝ Հյուսիսային Կիլիկիայից մի փոքր բարձր՝ Սեբաստիայի մոտ: Նրա ամբողջ գործունեությունը 33 տարում արժեցել է բյուզանդական 11 կայսրերի գոյությունը, որոնք հաջորդաբար գահը կորցրել են»,-ասում է գրքի հեղինակ Տիգրան Պետրոսյանցը:

Գրքի նյութը հեղինակը վերցրել է Մատթեոս Ուռհայեցու «Պատմության» երկրորդ մասից:

«1065 թվականին Կապադովկիա-Կիլիկիայում միավորվեցին Արծրունիները և Կարսի Գագիկ թագավորը, որոնք ընդունեցին Գագիկ Երկրորդ թագավորի գերագահությունը, Շահնշահի տիտղոսն էլ վերադարձվեց նրան: Այսպիսով Հայրենիքում 3 թագավորությունները վերացան, բայց շարունակեցին գործել ու բարգավաճել Հայրենիքից դուրս:

Իր գործունեության ողջ ընթացքում Գագիկ Երկրորդը խնդիր է դրել վերականգնել Հայոց պետականությունը. նա ստեղծել է բանակ, ձևավորել պալատ, կառուցել հայկական եկեղեցի, մեծացրել տարածքները, ընդդիմացել հավատուրացության կոչին»,-ասում է Տիգրան Պետրոսյանցը:

Բանասիրական ֆակուլտետում կազմակերպել էին ՀՊՄՀ գրադարանի տնօրեն, գրող, պատմաբան, մշակութաբան Տիգրան Պետրոսյանցի 68-րդ գրքի՝ «Գագիկ Երկրորդ» պատմաքաղաքական վեպի շնորհանդեսը:

Բացման խոսք ասացին ֆակուլտետի դեկան, բ.գ.դ.,պրոֆեսոր Աշոտ Գալստյանը և ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հ.գ.դ., պրոֆեսոր Կամո Վարդանյանը:

«Պատմավեպն ունի արդիական նշանակություն,-ասաց Ա. Գալստյանը՝ ընդգծելով, որ պատմավեպն առանձնանում է նրանով, որ պատմական ժամանակաշրջանին շաղախվում է գեղարվեստը: Իսկ ինչպե՞ս կարձագանքի դրան այսօրվա սերունդը. դա անչափ կարևոր է մեր ժամանակների համար»:

Հայցորդ Հովհաննես Սարգսյանը ներկայացրեց Տիգրան Պետրոսյանցի կենսագրությունը՝ նկատելով՝ երիտասարդների համար Բագրատունյաց թագավորի հերոսական կերպարը օրինակելի է:

Կամո Վարդանյանը ընդգծեց՝ Բագրատունյաց վերջին գահակալի՝ Կապադովկիայի Պիզու քաղաքում ձևավորած հայկական իշխանության տարիների և գործունեության մասին մշուշոտ պատկերացում ունենք. այս գիրքը գալիս է լրացնելու այդ բացը:

Պատմաքաղաքական վեպի արդիականության և գեղարվեստականության մասին խոսեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը: Նա կիսեց գրքի մասին իր տպավորություններ, գիրք, որը մեզ տեղափոխում է մեր պատմության 11-րդ դար: Պրոֆեսորը խոսեց հեղինակի՝ պատմական աղբյուրների խոր իմացության մասին, անդրադարձավ գրքում ներկայացված պատմական տարբեր դրվագներին, ընդգծեց Կիլիկիայում Գագիկ Երկրորդ քաղաքական գործչի և քաջ զինվորականի տաղանդի փայլուն դրսևորման փաստերը:

«Այս վեպը գրված է հայ դասական պատմավեպի ավանդներով, վավերականը և գեղարվեստականը սերտորեն միահյուսված, հստակորեն ընթերցողին ներկայացնում են պատմական իրողությունը»,- ասաց պրոֆեսորը:

Պրոֆեսորը Կիպրոսում տեսել է Կիլիկիայի հայկական հետքերը, զարմանում է՝ ինչպես պատահեց, որ հայրենիքից դուրս ձևավորվեց հայկական թագավորությունը. դրա պատասխանը տալիս է այս գիրքը: Նա ուսանողներին հորդորեց շատ կարդալ պատմավեպեր, իմանալ հայոց պատմությունը:

Պատմավեպի բառային ատաղձի մասին հանգամանորեն խոսեց Հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի պրոֆեսոր Գայանե Խալաթյանը: Նա անդրադարձավ վեպի բառապաշարին, բովանդակությունից բխող պատճառաբանված կառուցաձևերին, ներկայացրեց գրքում տեղ գտած մի շարք պատմական տեղանուններ, աշխարհագրական երևույթների անուններ, որոնցով հեղինակը ստեղծել է պատմական ոճավորում, անձնանուններին, որոնք կրում են պատմության շունչը, հնաբանություններին, որոնք խոսքին պատմականության երանգ են հաղորդել, լեզվապատկերային միջոցներով հարուստ նկարագրություններին, լեզվական կերպավորման ու անհատականացման խնդրին, դիմելաձևերի ու կոչականների առատ կիրառությանը, ժամանակային նորակազմություններին:

«Պատմության դասերն անչափ կարևոր են, միաժամանակ՝ անողոք և անդառնալի, երբ հարկավոր չափով չես փայփայում Հայրենիքդ ու չես պայքարում նրա արմատի, բնի, սաղարթի ամրապնդման ու զորեղացման համար». գրքի գլխավոր խմբագիր Էդիկ Գևորգյանը անդրադարձավ վեպի հարուստ աղբյուրագիտական հենքին և արդիականությանը՝ անկախ հայրենիքի ու պետականության անհրաժեշտության գաղափարին, հայապահպանության հարցերին՝ ցանկանալով, որ գրքի ուղերձները տեղ հասնեն: Սերունդները պարտավոր են դասեր քաղել՝ ասաց պատմաբանը՝ ուսանողներին հորդորելով հայրենիքի գաղափարով տոգորված լավ ուսումնասիրել նման գործերը:

Հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի վարիչ Վազգեն Համբարձումյանը ներկայացրեց իր նկատառումները հեղինակի և գրքի մասին՝ Պետրոսյանցին ներկայացնելով որպես հիանալի միջնադարագետ, գրող և պատմաբան՝ ընդգծելով հայոց թագավորների տոկունության ու անվեհերության հիանալի ներկայացումը գրքում :

Ելույթ ունեցավ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը, որը պատմավեպը որակեց որպես 21-րդ դարից թռիչք դեպի անցյալը, մտքերի, հույզերի թռիչք, ճշգրիտ վերլուծություն սուբյեկտիվ դաշտի վրա:

Հանդիպումն ամփոփեց օրվա «մեղավորը»՝ Տիգրան Պետրոսյանցը՝ հանգամանորեն խոսելով գրքի հղացման, դասերի և ուղերձների մասին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ. XII ԴԱՐԻ ԱՌԱԿՆԵՐԸ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ բաց դաս՝ նվիրված XII դարի վերջի հայ մշակույթի ամենաակնառու դեմքերից մեկին՝ հայ փիլիսոփա, աստվածաբան, առակագիր, Մխիթար Գոշին և նրա ստեղծագործական ժառանգությանը, մասնավորապես առակներին, որոնք առաջին անգամ լույս են տեսել Վենետիկում 1790 թվականին: Դարեր անց՝ 2025 թվականին, այս առակներից մի քանի տասնյակը, որոնք արդիական են իրենց իմաստությամբ նոր շունչ ստացան Ռուբեն Մարգարյանի կողմից և վերադարձվեցին ժամանակակից ընթերցողներին:

Դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով Ռուբեն Մարգարյանը դպրոցի հյուրն էր: Այցը խորհրդանշվեց վերջինիս «Մխիթար Գոշ. XII դարի առակները» («Мхитар Гош. Басни XII века») գրքի շնորհանդեսով:

Այս անգամ Ռ. Մարգարյանը Մխիթար Գոշի առակները թարգմանել է դյուրին բանաստեղծական ոճով՝ օգտագործելով մոնորիմը, նրանց հաղորդելով ժամանակակից երանգ: Նա հիմք է վերցրել ակադեմիկոս Հովսեփ Օրբելու «Միջնադարյան Հայաստանի առակներ» գիրքը: Գիրքը կարող է նպաստել ականավոր մտածողի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրությանը, զգալի օգնություն ցուցաբերել ծնողներին և ուսուցիչներին, որոնք կարևոր դեր են խաղում մատաղ սերնդի դաստիարակության, կրթության և զարգացման գործում: Այդ մասին իր գրախոսական խոսքում շեշտեց նաև դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը:

Հարգելի հյուրը նշեց, որ անդրադարձել է Մխիթար Գոշի ժառանգությանը, քանի որ ոգեշնչվել է այն փաստով, որ վերջինիս հիմնարար աշխատությունը՝ «Դատաստանագիրքը», ոչ միայն հայկական, այլ նաև միջազգային իրավական ավանդույթի հիմքն է: 2025 թվականին այն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողությունը» միջազգային ռեեստր՝ հաշվի առնելով առաջադեմ սկզբունքները, որը հայ փիլիսոփան ներառել է դեռևս XII դարում:

Ռուբեն Մարգարյանն իր երկարամյա արդյունավետ գործունեության շնորհիվ արժանացել է բազմաթիվ մրցանակների: 2021 թվականին «Ոսկե գրիչ» անվանակարգում ազգային մրցանակի դափնեկիր է:

Ունկնդրելով դպրոցի աշակերտների կողմից առակների ընթերցանությունը, կարծիքները, հետաքրքիր մեկնաբանությունները՝ Ռուբեն Մարգարյանը հաճելիորեն զարմացած էր և ուրախ, որ զրուցեց նման ընթերցասեր ու պատրաստակամ նոր սերնդի հետ:

Միջոցառման ավարտին «Վերածնունդ» դպրոցի աշակերտները ստացան Ռուբեն Մարգարյանի ինքնագրով «Մխիթար Գոշ. XII դարի առակները» գրքերը:

ՎԵՐԱՆԱՅԵԼՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

5 մոդուլով 4-ամսյա դասընթաց, 15 հանդիպում, 23 մասնակից, որոնց հետ քննարկվեցին և ոլորտի մասնագետների հետ միասին գործնականում կիրառվեցին հուզական բանականության, քննադատական, ստեղծարար մտածողության, փոփոխությունների կառավարման, կրթական նորագույն տեխնոլոգիաների, այդ թվում՝ կրթական գործընթացներում ԱԲ-ի կիրառման վերաբերյալ տարբեր մոտեցումներ:

Նախնական կարիքի գնահատման արդյունքում մշակվել է ծրագրի մոդուլ և ներկայացվել հատուկ ուսումնական հարթակում: Ստեղծվել է նաև կայք, որը թույլ կտա մասնակիցներին հետագայում իրականացնել նմանատիպ վերապատրաստումներ, լսարանային պայմաններում կիրառել գործիքներն ու մոտեցումները:

Ավարտին մասնակիցները հեքըթոնային ձևաչափով ներկայացրին իրենց capstone նախագծերը՝ ամփոփելով դասընթացների շրջանակում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները, ցույց տալով դրա կիրառումն ամենօրյա դասավանդման և ուսումնառության պրակտիկայում:

«GROW2MASTER-ը ձևավորել է մտածողության փոփոխություն. արդյունքում՝ դասախոսները սկսել են վերանայել դասավանդման մոտեցումները՝ ուսուցումը դարձնելով առավել հետաքրքիր, ժամանակակից և կիրառելի: Ծրագիրը հիմք է դրել երկարաժամկետ փոփոխության՝ նպաստելով որակյալ կրթության զարգացմանը և ուսանողների հետ աշխատանքի նոր որակի ձևավորմանը»,-նշեց դասընթացավար Քրիստինա Ծատուրյանը, որը մասնակիցներին վերապատրաստեց հուզական բանականության և ուսումնառության մոտիվացիոն տեսությունների թեմաներով:

Այն, որ դասընթացն անցկացվել է ոչ ստանդարտ ձևաչափով, հագեցած ծրագրով, փոխանցել է նոր գաղափարներ, ձևավորել նոր կարողություններ, նշում են նաև իրենք՝ վերապատրաստվողները:

Նրանք, մասնավորապես, նկատում են՝ դասավանդման ընթացքում սկսել են առավել ակտիվորեն կիրառել ծրագրի ընթացքում ներկայացված մոտեցումները. դրանք կարևորվել են նաև գործընկերային շփումների ընթացքում և առօրյա կյանքում:

Նշենք, որ ծրագիրն իրականացվում էր ՀՊՄՀ և «ԷԿՍԵՈ» կրթության և կարիերայի զարգացման հիմնադրամի համագործակցությամբ՝ Հ. Հովսանյան ընտանեկան հիմնադրամի աջակցությամբ:

Մարին Աղեկյան

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԵՏ

Նոր տարվա հետ մեր հույսերը նորոգվում,
Ծաղկում են մեր երազները հեռացած,
Հեռուներում նոր լույսեր են ճառագում
Ամանորյա օրհնանքներից զորացած:
Ջահելացած հոգիներում բոլորի
Թրթռում է Աստծո շունչը սրբազան,
Ողջունում են մարդիկ ժպտուն ու բարի՝
Եղբոր նման ու քրոջ պես հարազատ:
Նոր տարվա հետ մեր հույսերը նորոգվում,
Մեր կյանքին նոր զույն են տալիս և իմաստ,
Հին արմատից նոր շյուղեր են ընձյուղում,
Որ աշխարհը մնա կանաչ ու հաստատ:
Նորը՝ կարոտ, նորը՝ ժպիտ, նորը՝ սեր,
Հին ճամփով նոր քայլ է անում Նոր տարին,
Բոլորին նոր թռիչք տալիս ու թևեր,

ԶԱՀՐԱՏ

ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ ՄԸ

Կաղանդի ծառ մը շտկելու համար
Երկու բան պէտք է
Նախ ծառ մը — յետոյ զարդեր ծառին վրայ

Կաղանդի ծառ մը շտկելու համար
Երեք բան պէտք է
— Ծառէն զարդէն զատ
Հաւատքը գալիք աղուոր օրերու

Կաղանդի ծառ մը շտկելու համար
Մէկ բան կը բաւէ — ոչ ծառ ոչ ալ զարդ —
Ատիկա խիճերն ադամանդ կարծող
Միամիտ հոգւոյս բարի խաբկանքն է

Կաղանդի ծառ մը շտկելու համար
Արդէն պատրանքը լրիւ կը բաւէ

Բարի տարի ձեզ եւ բարի պատրանք

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Տարոն Ալեքսանյանի